ՀԱՊ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երկրորդ բողոքը <<Լիդիան Ինթերնեշնլ>> 3-ում (Ծրագիր #27657) ՄՖԿ-ի կողմից կատարված ներդրումների վերաբերյալ

Գնդեվազ, Հայաստան

Փետրվար 2015

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի գրասենյակ
Միջազգային ֆինանսական կորպորացիա/
Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության
www.cao-ombudsman.org

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականը

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակն անկախ օգնության մեխանիզմ է Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) համար: ՀԱՊ-ն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊ -ի առաքելությունն է դիտարկել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքում տուժած անձանց բողոքներն անաչառ, անկողմնակալ և կառուցողական կերպով, ինչպես նաև նպաստել այդ ծրագրերի բնապահպանական և սոցիալական արդյունքների բարելավմանը:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք ՀԱՊ-ի կայք հետևյալ հղմամբ՝ www.cao-ombudsman.org :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ……5
2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ……..5
   2.1. Ծրագիրը……5
   2.2. Բողոքը…….. 7
3. ԳՆԱՀԱՏՈՒՄ…… 7
   3.1. Մեթոդաբանություն…… 7
   3.2. Խնդիրների ամփոփում …….. 8
   3.3 Շահագրգիռ անձանց նպատակներն ու օգուտները…….. 9
   3.4 Հաջորդ քայլերը…… 9

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՆԵԳ	Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության
ԲՄԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ՀԱՊ	Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդական
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2014թ. հուլիսին ՀԱՊ-ը բողոք ստացավ Հայաստանի Գնդեվազ համայնքի անդամներից <<Լիդիան Ինթերնեշնլ Լիմիթիդ>> ընկերությունում ՄՖԿ-ի կողմից կատարված ներդրումների վերաբերյալ: <<Լիդիանը>>կրտսեր հանքարդյունաբերական ընկերություն է, որն օժանդակում է Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի իրականացմանը: Գնահատման ընթացքում կողմերը համաձայնեցին մասնակցել ՀԱՊ-ի աջակցությամբ իրականացվող վեճերի լուծման գործընթացին: Սույն Գնահատման զեկույցում ներկայացված է ընդհանուր տեղեկատվություն գնահատման գործընթացի, այդ թվում՝ ծրագրի նկարագրի, բողոքի, գնահատման մեթոդաբանության և հաջորդ քայլերի վերաբերյալ:

2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ծրագիրը

Համաձայն ՄՖԿ-ի՝ <<Լիդիանը>> կրտսեր հանքարդյունաբերական ընկերություն է, որը հիմնականում զբաղվում է հետազոտման ծրագրերով Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: Ամբողջությամբ իրեն պատկանող «Գեոթիմ» ՓԲԸ դուստր ձեռնարկության միջոցով <<Լիդիանը>> ստացել է լիցենզիաներ Ամուլսարի հանքավայրի հետազոտման համար: Ամուլսարը գտնվում է Հայաստանի կենտրոնական մասում՝ Երևանից մոտ 120 կմ հարավ: Ծրագիրն իրագործելիության առաջընթաց փուլում է: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունը և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) ավարտվել են 2014թ.-ի հուլիսին: Բոլոր կարևոր թույլտվությունները ստանալու պարագայում ակնկալվում է, որ ծրագիրը կանցնի զարգացման և շինարարության փուլին: Ոսկու արտադրությունն առաջին անգամ նախատեսվում է իրականացնել 2017 թ.-ի սկզբին:

ՄՖԿ-ն 7.9% բաժնետեր է և 2007 թ.-ից ի վեր ներդրել է $1 6մլն. կանադական դոլարից ավել գումար տարբեր փուլերում: Ծրագիրը որակավորվում է որպես Բ դասի ծրագիր, ինչը նշանակում է, որ այն ունի սահմանափակ անբարենպաստ սոցիալական և (կամ) բնապահպանական ազդեցություն, որը մեղմացուցիչ միջոցառումների միջոցով հնարավոր է հեշտությամբ վերացնել: ՇՄԱԳ-ը հաստատվել է ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից 2014թ.-ի հոկտեմբեր ամսին: «Լիդիանն» ակնկալում է, որ վարկատուների կողմից պահանջվող միջազգային Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ) կհրապարակվի 2015թ.-ի փետրվարին: 2014 թ. նոյեմբերին ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը Ամուլսարի ոսկու հանքի ծրագրին հատկացրել է հանքարդյունահանման թույլտվություն[1]:

[1] Ըստ «Լիդիան» ընկերության՝ Տիգրանես, Արտավազդես և Էրատո տեղամասերի շահագործման համար անհրաժեշտ է Հանքարդյունահանման Իրավունք (ՀԻ): ՀԻ-ն Տիգրանես և Արտավազդես տեղամասերի շահագործման համար շնորհված էր դեռևս 2012թ-ին, բայց հաշվի առնելով նախագծային փոփոխությունները, որոնք արդեն իսկ ներառված են 2014թ.-ի նորացված Իրագործելիության ուսումնասիրությունում, այն վերաներկայացվեց 2014թ.-ի հուլիս ամսին: Գեոթիմ ՓԲԸ-ին Էրատո տեղամասի և Տիգրանես և Արտավազդես տեղամասերի ծրագրային փոփոխությունների վերջնական ՀԻ-ն շնորհվել է 2014թ.-ի նոյեմբերի 26-ին:



Նկ. 1 Հանքարդյունահանման տեղամասային քարտեզ (կազմվել է «Լիդիան» ընկերության կողմից տրամադրված քարտեզի հիման վրա)

2.2. Բողոքը[2]

Բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին 2014 թ. հուլիսին Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի 148 բնակչի կողմից: Բողոքարկուները հայտնում են մտահոգություններ ապրուստի միջոցների, շրջակա միջավայրի և համայնքի առողջության վրա ծրագրի ունեցած հետևանքների վերաբերյալ: Բողոքում մասնավորապես նշվում են ծրագրի առնչությամբ պատշաճ տեղեկատվության, այդ թվում՝ հողատարածքների ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության պակասը, նախագծով կառուցվող ցիանային հարթակի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը, արոտավայրերի, անասունների և արտերի վրա բացասաբար ազդող աղտոտված փոշին, աշխատողների և համայնքի առողջական խնդիրները, ինչպես նաև համայնքի անբավարար ներգրավվածությունը:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄ

2014 թ. օգոստոսին ՀԱՊ-ը որոշեց, որ բողոքը համապատասխանում է ընդունելիության իր կողմից սահմանված չափանիշներին և սկսեց բողոքի գնահատումը: ՀԱՊ-ի գնահատման նպատակն է պարզաբանել բողոքարկուների կողմից բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները, հավաքագրել տեղեկատվություն իրավիճակի վերաբերյալ այլ շահառուների տեսակետի մասին և որոշել արդյոք կողմերը հետամուտ են լուծել վեճը ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանման, թե Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանման միջոցով: Գնահատման ընթացքում ՀԱՊ-ը չի հավաքագրում տեղեկատվություն ըստ բողոքի էության որոշում ընդունելու համար (ՀԱՊ-ի կողմից բողոքի քննման գործընթացի ամբողջական նկարագրությունը տե՛ս Ա Հավելվածում):

3.1. Մեթոդաբանություն

ՀԱՊ-ի կողմից վերոնշյալ բողոքի գնահատումը ներառել է հետևյալ փուլերը.

- Ծրագրային փաստաթղթերի վերանայում,
- Հանդիպումներ ազդակիր համայնքների անդամների, ընկերությունների ներկայացուցիչների և ՀԿ-ների հետ,
- Քննարկումներ ՄՖԿ-ի ծրագրային անձնակազմի հետ:

2014 թ. հոկտեմբերին և 2015 թ. հունվարին ՀԱՊ-ը երկու անգամ այցելեց Հայաստան և մասնավորապես Գնդեվազ հանդիպելու համար տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հետևյալ անձանց հետ.

---

[2] 2014թ.-ի ապրիլին ՀԱՊ-ը ստացավ առանձին բողոք Գնդեվազի և Ջերմուկի երկու բնակչի և նրանց աջակցող 9 հասարակական կազմակերպությունների (ՀԿ) կողմից: Բողոքը վերաբերումէր <<Լիդիանում>> և Ամուլսարի ոսկու հանքի ծրագրում ՄՖԿ-ի կողմից կատարված ներդրումներին: Նշված բողոքը ներկայումս գտնվում է Գործունեության չափանիշների համապատասխանության փորձաքննության փուլում: Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք ՀԱՊ-ի կայք հետևյալ հղմամբ՝ http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=221.

- <<Գեոթիմ>> ՓԲԸ-ի և <<<Լիդիանի>> աշխատակազմ,
- Հայրապետ Մկրտչյան, Գնդեվազի գյուղապետ,
- Գնդեվազի 42 բնակիչ,
- Ինգա Զարաֆյան, <<ԷկոԼուր>> ՀԿ-ի նախագահ,
- Աննա Շահնազարյան, <<Փրկենք Թեղուտը>> քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչ,
- ԼևոնԳալստյան, <<Համահայկական բնապահապանականճակատի>> ներկայացուցիչ
- Սոնա Այվազյան, <<Թրանսփերենսի ինթերնեյշնլ>> կենտրոնի տնօրենի տեղակալ:

2014թ. հոկտեմբերին կայացած այցի ընթացքում բողոքարկուները ՀԱՊ-ին ներկայացրեցին բողոքը ստորագրած ևս 62 անձանց ցանկ, ինչի արդյունքում բողոքարկուների ընդհանուր թիվը հասավ 210-ի:

3.2. Խնդիրների ամփոփում

Սույն ենթագլխում հակիրճ ներկայացված են այն խնդիրները, որոնք առաջադրվել են շահագրգիռ անձանց տարբեր խմբերի կողմից ՀԱՊ-ի հետ անցկացված քննարկումների ընթացքում: Սույն ամփոփումը չի հանդիսանում ՀԱՊ-ի կողմից կայացված որոշում ըստ բողոքի էության: Հիմք ընդունելով նախնական բողոքը և ՀԱՊ-ի գնահատման գործընթացի շրջանակներում շահագրգիռ անձանց հետ կազմակերպված քննարկումները՝ բողոքի լուծման նպատակով հասցեագրման ենթակա առաջնային խնդիրները հետևյալն են.

1. Ինչպե՞ս կարելի է պաշտպանել և (կամ) բարելավել Գնդեվազի ազդակիր համայնքների ապրուստի միջոցները:

2. Ինչպե՞ս կարելի է ավելի լայնորեն ապահովել Գնդեվազի ազդակիր համայնքների ձայնի իրավունքը և նրանց մասնակցությունը <<Լիդիանի>>/<<Գեոթիմի>> սոցիալական զարգացման ծրագրերի ընտրության, նախագծման և իրականացման գործընթացներին:

3. Ինչպե՞ս կարելի է Գնդեվազի համայնքի անդամների ակտիվ մասնակցությամբ համատեղ բացահայտել, խուսափել և (կամ) մեղմացնել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի հնարավոր և փաստացի հետևանքները շրջակա միջավայրի և մարդկանց ու կենդանիների առողջության վրա:

4. Ինչպե՞ս կարող են ազդակիր համայնքները, <<Լիդիանը>>/<<Գեոթիմը>> և այլ շահագրգիռ կողմերը համատեղ աշխատել ծրագրին առնչվող տեղեկատվության հասանելիությունը, տարածումն ու ըմբռնումը, համայնքի ներգրավվածությունը և հանրային խորհրդակցությունները բարելավելու համար:

5. Ինչպե՞ս կարող են համապատասխան կողմերը համատեղ աշխատել ապահովելու համար հողատարածքների արդար և փոխշահավետ ձեռքբերման և փոխհատուցման գործընթաց:

6. Ինչպե՞ս կարող են Գնդեվազի բնակիչներն ու <<Լիդիանը>>/<<Գեոթիմը>> համատեղ աշխատել <<ներքին բնակեցման>> (հանքի կառուցման և (կամ) գործունեության արդյունքում առաջացած գործընթաց, որը ենթադրում է ժամանակավոր

աշխատողների ու այլ անձանց տեղափոխում համապատասխան բնակավայր) արդյունավետ իրականացման ուղղությամբ:

7. Ինչպիսի՞ երկարաժամկետ ապագա են ցանկանում տեսնել Գնդեվազի բնակիչներն ու <<Լիդիանը>>/<<Գեոթիմը>>:

Համաձայն ՀԱՊ-ին ուղղված նախնական բողոք-նամակի՝ բողոքարկուները սկզբունքորեն դեմ են Ամուլսարի հանքի ծրագրին և կցանկանային, որ այն չշարունակվեր: Չնայած վերոնշյալ նամակում նրանք շեշտել են և շարունակում են դեմ լինել հանքի շահագործմանը, այնուամենայնիվ բնակիչները ցանկանում են վերոնշյալ հարցերի շրջանակներում <<Լիդիանի>>/<<Գեոթիմի>> հետ մասնակցել համատեղ քննարկումների:

3.3 Շահագրգիռ անձանց նպատակներն ու օգուտները

Հիմք ընդունելով գլխավոր շահագրգիռ անձանց հետ վերոնշյալ քննարկումները՝ ՀԱՊ-ի թիմը լսեց և առանձնացրեց հետևյալ հիմնական նպատակներն ու օգուտները, որոնց մեծ մասի հետ համամիտ էին բոլոր կողմերը.

- Ապահովել ծրագրի համապատասխանությունը ՄՖԿ/ԲՆԵԳ-ի չափանիշներին և քաղաքականություններին, լավագույն միջազգային փորձին և ՀՀ օրենքներին,
- Պահպանել կամ բարելավել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի արդյունքում տուժած ազդակիր համայնքների ապրուստի միջոցները,
- Հարգել և մեծարել Գնդեվազի պատմությունը, մշակույթը և ավանդույթները,
- Խուսափել կամ մեղմացնել շրջակա միջավայրին հասցվող վնասը,
- Խուսափել կամ մեղմացնել ծրագրի բացասական հետևանքները մարդկանց և կենդանիների առողջության վրա,
- Ապահովել Ամուլսարի հանքի ծրագրին առնչվող տեղեկատվության պատեհաժամությունը, դյուրըմբռնելիությունը, ճշգրտությունն ու հասանելիությունը հայերեն լեզվով,
- Ստեղծել վստահության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ շահագրգիռ կողմերի միջև,
- Ստեղծել ավելի բարեկեցիկ ապագա Գնդեվազի համար:

3.4 Հաջորդ քայլերը

ՀԱՊ-ի լիազորությունները, գործառույթներն ու ծառայությունները մանրամասն քննարկելուց հետո բողոքարկուներն ու <<Լիդիանը>>/<<Գեոթիմը>> խնդրեցին կիրառել ՀԱՊ-ի վեճերի լուծման գործընթացը՝ փորձելով լուծել բողոքում բարձրացված խնդիրները համագործակցային մոտեցմամբ: Վեճերի լուծման գործընթացներում ՀԱՊ-ը տրամադրում է չեզոք միջնորդություն/աջակցություն և ըստ անհրաժեշտության կազմակերպում առանձին և համատեղ հանդիպումներ: ՀԱՊ-ը կաշխատի կողմերի հետ՝ օգնելով նրանց համաձայնության գալ ժամկետների, գործընթացի և հանդիպումների ծրագրի շուրջ:

Հավելված Ա

ՀԱՊ-ի կողմից բողոքի քննման գործընթացը

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակն անկախ օգնության մեխանիզմ էՀամաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար: ՀԱՊ-ն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊ -ի առաքելությունն է դիտարկել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքում տուժած անձանց բողոքներնանաչառ, անկողմնակալ և կառուցողական կերպով, ինչպես նաև նպաստել այդ ծրագրերիբնապահպանական և սոցիալական արդյունքների բարելավմանը:

Նախնական գնահատումն իրականացվում է ՀԱՊ-ի Վեճերի կարգավորման ստորաբաժանման կողմից: ՀԱՊ-ի կողմից իրականացվող գնահատման նպատակն է՝ (1)պարզաբանել բողոքարկուի (բողոքարկուների) կողմից բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները, (2) հավաքագրել տեղեկատվություն իրավիճակի վերաբերյալ այլ շահառուների տեսակետի մասին և (3) օգնել շահագրգիռ կողմերին հասկանալ վեճերի լուծման իրենց հասանելի տարբերակները և որոշել արդյոք նրանք ցանկանում են հետամուտ լինել վեճերի համատեղ լուծման գործընթացին ՀԱՊ-ի վեճերի լուծման գործառույթի միջոցով, թե բողոքը պետք է վերանայվի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանման կողմից:

Սույն փաստաթղթում ներառված են նախնական գրառումներ ՀԱՊ-ի անձնակազմին հայտնած տեսակետների և հետագա քայլերի մասին՝ կախված կողմերի՝ վեճերի լուծման և գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման գործընթացների միջև ընտրություն կատարելուց: *Սույն զեկույցով չի ընդունվում որևէ որոշում ըստ բողոքի էության:*

Համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի[3]՝բողոքը ստանալուց հետո սովորաբար ձեռնարկվում են հետևյալ քայլերը.

Քայլ 1: Բողոքի ստացման **հաստատում,**

Քայլ 2: **Ընդունելիություն:** Բողոքի ընդունելիության ստուգում և որոշման կայացում առ այն, թե արդյոք բողոքը համապատասխանում է ՀԱՊ-ի կողմից հետագա գնահատման չափանիշներին (15 աշխատանքային օրվանից ոչ ավել),

[3]ՀԱՊ-ի դերի և աշխատանքի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տե՛ս ամբողջական Գործառնական ուղեցույցը՝ http://www.cao-ombudsman.org/documents/CAOOperationalGuidelines2013_ENGLISH.pdf

Քայլ 3: **ՀԱՊ-ի գնահատումը:**ՀԱՊ-ն իրականացնում է խնդիրների գնահատում և օգնում շահագրգիռ կողմերին հասկանալ և որոշել, թե արդյոք նրանք ցանկանում են հետամուտ լինել վեճերի փոխհամաձայնեցված լուծմանն, ինչն իրականացվում է ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանման կողմից վեճերի համատեղ լուծման գործընթացի միջոցով, թե գործը պետք է փոխանցվի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանում՝ վերանայելու համար ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից ցուցաբերված պատշաճ ջանադրությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում: Գնահատումը կարող է տևել առավելագույնը 120 աշխատանքային օր:

Քայլ4: **Աջակցություն վեճերի լուծման գործում:** Եթե կողմերը որոշում են ընդունում հետամուտ լինել վեճերի համատեղ լուծման գործընթացին, ապա գործադրվում է ՀԱՊ-ի վեճերի լուծման գործառույթը:Վեճերի լուծման գործընթացը սովորաբար հիմնված է կամ մեկնարկում է համաձայն կողմերի միջև կնքված Փոխըմբռնման Հուշագրի և (կամ)փոխհամաձայնեցված սկզբունքային կանոնների: Այն կարող է ներառել աջակցություն/միջնորդություն, փաստերի համատեղ հավաքագրում կամ վեճերի լուծման այլ համաձայնեցված մոտեցումներ, որոնք հանգեցնում են վեճերի լուծման համաձայնագրի ստորագրմանը կամ այլ փոխհամաձայնեցված և պատշաճ նպատակի իրականացմանը: Վեճերի լուծման նման մոտեցումների հիմնական նպատակն է տուժած կողմերի համար ընդունելի եղանակով հասցեագրել բողոքում բարձրացված հարցերը և գնահատման կամ վեճերի լուծման գործընթացում վերհանված ու բողոքին առնչվող էական խնդիրները[4]:

Կամ

Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանման կողմից իրականացվողփորձաքննություն/աուդիտ: Եթեկողմերն ընտրում են Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկմանգործընթացը, ապա Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանումը սկսում էփորձաքննել դիտարկվող ծրագրի հանդեպՄՖԿ/ԲՆԵԳ-ի ցուցաբերած պատշաճ ջանադրությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում՝ որոշելու համար ՄՖԿ/ԲՆԵԳ-ի՝ ծրագրին առնչվող գործունեության աուդիտի նպատակահարմարությունը: Փորձաքննությունը տևում է առավելագույնը 45 աշխատանքային օր: Եթե որոշում է ընդունվում աուդիտի նպատակահարմար լինելու մասին, ապա ՀԱՊ-ն իրականացնում է ՄՖԿ/ԲՆԵԳ-ի գործունեության մանրամասն աուդիտ: Աուդիտի զեկույցը՝ բոլոր հայտնաբերված խախտումների ներառմամբ, ՄՖԿ/ԲՆԵԳ-ի պատասխանի հետ միասին հանրայնացվում է:

[4]Այն դեպքում, երբ շահագրգիռ կողմերը սահմանված ժամկետում չեն կարողանում լուծել խնդիրները վեճերի համատեղ լուծման գործընթացի միջոցով, ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանումը նախ փորձում է աջակցել շահագրգիռ կողմերին նման անելանելի դրությունից (դրություններից) դուրս գալու գործում: Այդ տարբերակի անհնարինության դեպքում Վեճերի լուծման ստորաբաժանման անձնակազմը տեղեկացնում է շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ ՄՖԿ/ԲՆԵԳ-ի աշխատակազմին, Համաշխարհային բանկի խմբի նախագահին և խորհրդին, ինչպես նաև հանրությանն այն մասին, որ ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանումը փակել է գործը և փոխանցել բողոքը Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկման ստորաբաժանում փորձաքննության անցկացման համար:

Քայլ 5: **Մշտադիտարկում** և հետագա վերահսկողություն,

Քայլ 6: **Աշխատանքի ամփոփում** /Գործի փակում